ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **«24» մայիսի 2021թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը, և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցերը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2021 թվականի մայիսի 21-ին և ավարտվեց 2021 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 18^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված նախադպրոցական կրթության ոլորտում ստուգումների ստուգաթերթերի նախագծի ներկայացում:

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կողմից 2020 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

3. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքների ներկայացում:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավանեսյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Ք. Գրիգորյան 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»
6. Ս. Ալոյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
7. Բ. Փափազյանը 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
8. Ա. Բախշյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ», իսկ 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկել է «դեմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 8 «կողմ»:

Հարց 2-րդ՝ 7 «կողմ» 1 «դեմ»:
Հարց 3-րդ՝ 7 «կողմ» 1 «դեմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հեռակա նիստին մասնակցած խորհրդի 8 անդամներից 7-ը օրակարգի բոլոր 3 հարցերին քվեարկել են «կողմ»:

Ա. Բախշյանն առաջարկել է օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը առկա քվեարկությամբ անցկացնել, որովհետև հեռակա քվեարկությունը չի ապահովում հարցերի ըստ էության քննարկումը:

Ա. Ասոյանը 3 հարցին «կողմ» քվեարկելով, միաժամանակ առաջարկել է, որ 2-րդ հարցի հետ կապված տեսչական մարմինը խորհրդին ներկայացնի հետևյալ կարգերը՝

1. «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի գործունեության ոլորտում տնտեսավարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու կարգ»-ը,
2. «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ներքին գործավարության կարգ»-ը:

Ա. Ասոյանը 3-րդ հարցի հետ կապված առաջարկել է պարզաբանում ներակայացնել մեկ ստուգման վրա կատարվող ծախսերի աճի վերաբերյալ:

Տեսչական մարմինը խորհրդին ներկայացրեց՝
«Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ներքին գործավարության կարգ»-ը և նշված պարզաբանումը՝ մեկ ստուգման վրա կատարվող ծախսերի վերաբերյալ:

Տեսչական մարմնին հանձնարարվեց՝ հաջորդ նիստին խորհրդին ներկայացնել՝
«Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի գործունեության ոլորտում տնտեսավարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու կարգ»-ը:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված նախադպրոցական կրթության ոլորտում ստուգումների ստուգաթերթերի նախագծին:

Հարց 2. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կողմից 2020 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ հաշվետվությանը:

Հարց 3. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքներին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն